ՄԱՆՅԱ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԱՅՏԵ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՌՆԵՐԸ*

Փայտի գեղարվեստական փորագրության և գեղարվեստական կերպավորման առումով առանձնակի խումբ են կազմում Թեոդոսիա (Ղրիմ) քաղաքի եկեղեցիների դռները:

Թեոդոսիայի եկեղեցիներին նվիրված առանձին աշխատություններում հիշատակվում են մի քանի դռներ, որոնք զարդարել են տեղի ս. Սարգիս և Հրեշտակապետաց եկեղեցիները: Այս դռները հիմնականում կատարվել են XIV—XV դդ.: Հնագույնը Գաբրիել և Միքայել հրեշտակապետների եկեղեցու դուռն է, որը նախկինում եղել է ս. Սարգիս եկեղեցում: Այն ընկուզենու փայտից է, վերին մասում տեղադրված արձանագրությունը շեշտում է դռան պատրաստման տարեթիվը՝ ՊԺԷ (1368)[22]: Այս դռան հարդարանքում առկա է ձևավորման որոշակի տեղական կնիք, մշակման չորություն: Նույն այս դռան օրինակով ստեղծվել է մեկ ուրիշը, որի արձանագրության մեջ հիշատակվում է փորագրման ժամանակը՝ 1371 թ. («Է յիշատակ վասն ամենի 'ի յոյթ հարիւր և ի թվի գործեալ ձեռամբ Շնոֆոր շահի»: Մյուս փեղկի վրա փորագրված է. «Կատարեցաւ դուռս տաճարի սրբոյն Սարգսի զաւրաւարի, արդար արդեամբք ժողովրդի»)[23]: XIX դ. դուռը տեղափոխվել է տեղի Հրեշտակապետաց եկեղեցին, վերանորոգվել է, իսկ այժմ պահպանվում է Լենինգրադի պետական Էրմիտաժում[24]:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1981 թվականի № Բ-ից:

22 Արձանագրությունն է. «Տր Մամիկոնեանց 'ի թվին ՊԺԷ մարտի ԻԸ»: Ունի նաև հետագայում փորագրված արձանագրություն. «Այս դուռս է սբ տաճարի, որ է յանուն սբ. Սարգսի զաւրա»: «Յիշ. արդեանց Թորոսիս. յիշատակ իւր և իւր զարմի. 'ի թվիս ՋՀԹ (1530)»: **Հ. Մ. Բժշկեանց,** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան...: Վենետիկ, 1830, էջ 349:

23 Նոյն տեղում, էջ 351: Այս դռների մասին տես նաև. *Хр. Кучук-Иоаннесов,* Старинные армянские надписи и старинные рукописи в пределах юго-западной Руси и в Крыму. В книге «Труды восточной комиссии императорского московского археологического общества». Москва, 1903, т. I, вып. III.

24 *А. Л. Якобсон,* Армянская средневековая архитектура в Крыму. «Византийский временник», Москва—Ленинград, 1956, т. VIII. Դռները հիշատակվում են նաև. **Վ. Միքայելյան,**



Դուռ Թեոդոսիայից: 1371 թ.: Լենինգրադ, պետական Էրմիտաժ

1371 թ. կատարված դուռը Թեոդոսիայում պահպանված փայտյա դռներից ամենալավագույնն է, որի ձևավորումն արված է հստակ և արևելյան ինքնատիպ մտածողությամբ: Հաստ ու կարծր կաղնու հավասարաչափ երկու հատվածների բաժանված տարածությունը Ծնորորշաֆ վարպետի ստեղծագործական հմտության շնորհիվ ծածկվել է երկրաչափական զարդաքանդակներով, որոնք յուրաքանչյուր դռան վրա ոճավորված խաչաձև երեքական հատվածներ են կազմում: Ուշագրավ է, որ ճիշտ նույն զարդանախշով, խաչերի ու ականթների տերևների տարատեսակների նույն զուգորդումներով, 1355 թ. պատրաստվել է մեկ այլ դուռ, որը պահպանվել է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի տաճարի ներսում: Արևելագետ Ջոն Կարսուելը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել վերոհիշյալ դուռը[25]: Անդրադառնալով դռան կառուցվածքին, նկարագրելով զարդաքանդակները (բուսական զարդանախշի մեջ երկարաձիգ տեղադրված չորս շարք խաչերը), նա ճշտում է նաև դռան վերևում երեք շարքով տեղադրված արձանագրությունը[26]: Դուռը կառուցվել է Հովհաննեսի հիշատակին, նրա որդիների կողմից: Ջ. Կարսուելը հանգում է շատ հետաքրքիր մի եզրակացության. դուռը կարող է Երուսաղեմ բերված լինել թերևս Իրանից, որտեղ ստեղծված խեցե սալիկների հետ (Քաշան, XV դ.) մեծ աղերս ունեն այս դռան զարդանախշերը: Կարելի է ենթադրել, որ այս դուռը ևս դուրս է եկել Թեոդոսիայի վերոհիշյալ դռան արվեստանոցից կամ նրանք ունեցել են ընդհանուր մի նախօրինակ: Բոլոր դեպքերում, դռների այս խումբը կապվում է Արևելյան Հայաստանի փայտի գեղարվեստական փորագրության դպրոցի առանձնահատկությունների հետ[27]:

XVI—XVII դարերում ինչպես կերպարվեստի մյուս բնագավառներում, նույնպես և փայտի գեղարվեստական փորագրության կենտրոնները տեղադրվում են գաղթօջախներում. Նոր Ջուղա, Հալեպ, Ղրիմ, Մոսկվա, Լվով և այլուր: Այստեղ ստեղծված աշխատանքներն անդրադարձնում են ինչպես ազգային կիրառական արվեստի բնորոշ գծերը, նույնպես և տարբեր երկրների արվեստների հետ ունեցած աղերսներն ու ազդեցությունները: Այս դարերում փայտի գեղարվեստական փորագրությամբ կատարված դռների արվեստում որոշակի անկում է նկատվում, առկա են էկլեկտիզմի տարրեր, որոնք թելադրված են ինչպես արվեստի այս տեսակի, նույնպես և ճարտարապետության գեղարվեստական կերպարում կատարվող որոշակի փոփոխություններից: Այսպիսի աշխատանքներից են Եվդոկիայի ս. Հովակիմ-Աննայի վանքի երբեմնի տաճարի դռները, որոնք թեև կատարված են 1479 թ., բայց արդեն սկզբնավորում են արվեստի այս տեսակի ուշ շրջանին բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Երկփեղկանի այս դուռը պատրաստված է եբենոսի փայտի իրար ագուցված մանր կտորներից՝ վեցանկյուն աստղեր կամ խաչեր, որոնք սակայն շատ ավելի առանձնացված են դիտվում: Ըստ արձանագրության, դուռը պատրաստվել է Հակոբ վարդապետ Երուսաղեմցու կողմից[28]:

Հին Ղրիմից (Կարասու Բազարից) պահպանվել են փայտի դռներ (Լենինգրադ, Պետական Էրմիտաժ) կատարված 1572 թ.: Դռների վրա փորագրված են տեղական փորագրական արվեստում լայն տարածում

Ղրիմի հայկական գաղութի պատմությունը: Երևան, 1964: Նրանց առանձին հոդված է նվիրել Հ. Հարությունյանը, «600-ամյա քանդակազարդ մի դուռ»: «Սովետական արվեստ», 1968, № 11:

[25] Ջ. Կարսուելն իր ուսումնասիրությունների արդյունքների մասին զեկուցեց Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիումում. *Джон Карсвуэлл*, Резная дверь в армянском кафедральном соборе св. Якова в Иерусалиме. Ереван, 1978.

[26] Ձախ փեղկի վրա. «Կազմս դռան Սուրբ Տաճարի որ է յանուն սուրբ Պաւղոսի Առաքելոց Մեծայ գնոի»: Աջ փեղկի վրա. «Սա յիշատակ անջնջելի հեզաձոգույն Յոհաննէսի եւ որում Բեկ և Միրզա եւ տլի թվին ՊԵ (805=1356)»:

[27] Այս դռան գեղարվեստական արժանիքներին առաջինն անդրադարձավ Գարեգին արքեպս. Հովսեփյանը: Նա վերծանեց արձանագրությունը (թերի), դռան պատրաստումը համարելով 1371 թ. (ՊԻ): **Գարեգին արքեպս. Հովսեփյան**, Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից: «Պայքար», տարեգիրք, Բեյրութ, 1950:

[28] Արձանագրությունն է. «Ի թուին ՉԻԸ (1579) կազմեցաւ դուռս սբ. Տաճարիս, զիշատակ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոսի եւ Տ. Կարապետ կաթողիկոսին հանգուցելոյն ի Քրիստոս, որ եղեւ պատճառ շինն թեան սուրբ տաճարիս եւ այլ ամենայն երախտաւորաց հայոց ազգիս եւ միաբանիցս եւ աշխատութեամբ... ձեռամբ անարհեստ Յակոբ վարդապետի Երուսաղեմցւոյ շինեցաւ..»: **Տրդատ եպիս. Պալեան**, Հայ վաներայք ի Թուրքիա: Ա մաս, Իզմիր, 1914, էջ 131, **Արշակ Ալպոյաճյան**, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց: Գահիրե, 1952, **Հ. Ներսես Ակինյան**, Եվդոկիայի եկեղեցւոյն դուռն: «Հանդես ամսօրյա», 1961, № 75, էջ 963—964, որտեղ հրապարակված է 1911 թ. Եվդոկիայից ստացված դռան լուսանկարը:



Դուռ Թեոդոսիայից։ 1572 թ.։ Լենինգրադ, պետական Էրմիտաժ

գտած ոճավորված խաչերի ուրվագծերը: Դռան վարպետը բարձր փորվածքով խաչերի եռագիծ շրջանակներ է անում: Ականթի տերևներով ստեղծված նրբահյուս զարդաքանդակները հիշեցնում են գրքային արվեստում լայն տարածում ստացած լուսանցազարդերը: Դռան երիզի զարդաքանդակը նույնությամբ կրկնում է 1371 թ. փայտե դռան զարդամոտիվը: Դռան գեղարվեստական կերպարի ամբողջացմանը խանգարում է արձանագրության հատվածի անշուք և անմշակ կառուցվածքը, տառերի անհավասար գծային փորագրությունը: Փեղկերի հիմնական մասը վարպետն առանձին է փորագրել ու տեղադրել շրջանակի մեջ: Փեղկերի ու շրջանակի որոշ մասերի հավելումների անհամապատասխանությունը, զարդանախշերի ոճական որոշակի տարբերությունները, նրանց միասնականության բացակայությունը, ինչպես նաև շրջանակի կոպիտ փորվածքը հիմք են տալիս ենթադրելու, որ դրանք տարբեր դռների հատվածներ են և հետագայում են հավաքվել իրար հետ[29]:

Դռների նույն խմբին են պատկանում Ղրիմից Նոր Նախիջևան տեղափոխված փայտե դռան բեկորը (եղել է Գրիգոր Լուսավորչի եկեղեցու խորանում, այժմ՝ Հայաստանի պատմության պետական թանգարան), ինչպես նաև Հին Ղրիմի (Սուրխաթի) մոտ ս. Խաչ վանքի տաճարի դռները, որոնք ըստ Վ. Սմիռնովի «բավականին կոպիտ աշխատանքներ են և չեն բավարարում ոչ աշխատանքի մաքրությամբ, ոչ հնությամբ»[30]: Դրանց հակառակ, Տաթևի 1614 թ. պատրաստված փայտե դռան կոմպոզիցիայում, ավանդները պահպանվում են ինչպես հորինվածքների զարդաքանդակային կոմպոզիցիաներում, նույնպես և փորվածքի նրբագեղության ու հստակության մեջ[31]: Այս դռան վարպետը երկու հավասար մասերի է բաժանում կենտրոնական կոմպոզիցիան, որից մեծանում է ցածի վարդակը և վերևի խաչի համար համեմատաբար փոքր տարածություն է մնում: Կենտրոնական տեղ գրավող այս խաչի թևերի տակ նա տեղավորում է նույնպես փոքրաչափ խաչեր, որոնք առնվում են կամարատեսք կիսաշրջանակների մեջ: Կոմպոզիցիայի այսպիսի ծանրաբեռնվածությունը թելադրված էր նաև XVII դարում որոշակի անկում ապրող քարի փորագրության արվեստից:

Տաթևի վանքի համար պատրաստված երկու դռներն իրարից բաժանում է մոտ 350 տարի, սակայն երկուսն էլ ունեն մտածողության որոշակի միասնականություն, գեղարվեստական արտահայտչականության հնարների նույնություն: Միաժամանակ, դրանցից յուրաքանչյուրը կապված է իր ժամանակի հետ: Մեկը՝ միջնադարյան հայ արվեստի ծաղկման ժամանակաշրջանի արտահայտություն է, մյուսը՝ անկման: Պետք է ենթադրել, որ եղել են նաև միջանկյալ օրինակներ, քանի որ, շատ հավանական է Տաթևում փայտի գեղարվեստական փորագրության տեղական դպրոցի գոյությունը:

Գեղարվեստական ընտիր փորագրված դռներ է ունեցել Ագուլիսի ս. Թովմա առաքյալի վանքի եկեղեցին: Արևմտյան դռան վրա քանդակված է եղել խաչը ձեռին Քրիստոսը, որի կողը շոշափում է Թովմա առաքյալը: Դռան եզրերին, առանձին հատվածներով, քանդակված են եղել Աստվածամայրը, Մարիամ Մագթաղենացու, Աստծո, լուսնի պատկերումները, ունեցել է նվիրատվության արձանագրություն, ըստ որի դուռը պատրաստվել է 1694 թ.[32]: Ինչպես տեսնում ենք, ժամանակի գեղանկարչության զարգացումն իր հետքն է թողել նաև փայտի գեղարվեստական փորագրության վրա:

Նոր Ջուղայի եկեղեցիների դռների փորագրության մեջ զգալի է պարսկական արվեստի ուժեղ ազդեցությունը: Լավագույններից է Աստվածամոր եկեղեցու հարավային դուռը, որի երկու փեղկերի ողջ տարածությունն ընդգրկում է առանձին քառանկյունիների մեջ առած ստալակտիտե ոճավորված ուրվագծեր, որոնք լայն տարածում ունեն մուսուլմանական արվեստում: Նոր Ջուղայի եկեղեցիների դռները, որոնք պատրաստվել են XVII դ. վերջում և XVIII դարում, մի փոքր ծանրանիստ են և հեռու արվեստի մյուս տեսակների արտահայտ-

[29] Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցու դռներից մեկն ունի այս արձանագրությունը. «Արդեամբք կիր Ալեքսին յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց»: Մյուս փեղկի վրա. «Աջս դրան սրբոյ Սարգսի զաւրավարին եղեւ»: Հ. Մ. Բժշկեան, նշվ. աշխ., էջ 349:

[30] *В. Смирнов,* Археологическая экскурсия в Крым летом 1886 года. «Записки восточного отделения Императорского русского археологического общества», т. I, вып. IV, СПб, 1887. Նույնը՝ **Խորեն Ստեփանե**, Ղրիմի սուրբ Խաչ վանքը: Սպբ, 1891, էջ 11—12:

[31] Դռան աջ կողմի անկյունում փորագրված է. «Թվին ՌԿԳ»: Չափն է 198×110: Հայաստանի պատմության պետական թանգարան:

[32] **Ե. Լալայան**, Գողթն: Թիֆլիս (առանց տարեթվի), էջ 70:



Դուռ սադափապատ: Վարպետ Հակոբ. 1731 թ.: Երուսաղեմ, Ս. Հակոբյանց Մայր տաճար

չականությունից: Նոր Ջուղայի փայտի փորագրության ոճական արձագանքները տեսնում ենք Ս. Թադեի վանքում: Տաճարի հյուսիսային մուտքի դռան կոմպոզիցիան կառուցված է աստղաձև և շրջանակաձև տարրերից: Այստեղ նշանակալից դեր են խաղում նաև հավասարաչափ դասավորված մետաղյա հղկված բութակները, որոնց գլանիկներից ճառագայթաձև դեպի հակադարձ անկյունն են գնում ողորկ փայտիկներ, իրենց շուրջն ունենալով մանր շրջանակներ: Ս. Թադեի տաճարի դուռն ունի ընդգծված հստակ կոմպոզիցիա՝ եզրերում և մեջտեղում տեղավորված շրջանակներ, որոնց վերևում փորագրված է կատարման մասին արձանագրությունը[33]: Դուռն ուշագրավ է նաև փայտի գեղարվեստական մշակման տեխնիկայի տեսակետից: Փայտի առանձին մանր կտորները հավաքված և ամրացված են ուրիշ տախտակի վրա: Այսինքն, մենք գործ ունենք արդեն ինտարսիայի տեխնիկայի հետ, որպիսիք են նաև Մեղրու եկեղեցու դռները (XVI դ.): Բավականին մոնումենտալ տեսք ունի ս. Ստեփանոս Նախավկայի վանքի (Իրան) տաճարի գլխավոր մուտքի փայտե դուռը (1660): Այստեղ արդեն խաչը կորցնում է իր առաջնահերթ նշանակությունը և ձուլվելով բազմանիստ երկրաչափական տարատեսակ զարդերին, հանդես է գալիս որպես ընդհանուր տարածք կազմող տարր: Գծերի ու զարդանախշերի հստակ համաչափությունները, երկաթյա գնդաձև բութակների առատությունը շքեղություն են հաղորդում դռան ընդհանուր տարածքին[34]:

Փայտի գեղարվեստական փորագրությամբ արված դռների արվեստը XVIII դ. անկում է ապրում: Հիշատակություններ կան, որ արվեստի այս տեսակը որոշակի աշխուժություն է ապրում Կ. Պոլսում: Սակայն, քաղաքի տարբեր թաղամասերում պարբերաբար առաջացած հրդեհները ոչնչացրել են նաև այսպիսի արժեքները: Հայտնի է, որ այնպիսի բարձր վարպետությամբ էր կատարվում դռների փորագրու-

[33] «Յիշատակ է դուռս սուրբ ... սրբազան ՌՄ»:

[34] Արձանագրությունն է. «Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դուռս ագույ(ե)ցի խօճ(ա)յ Ն(ի)կողայոսին եւ կ(ո)ղ(ա)կցացն Մարիամին եւ Մ(ա)րգ(ա)ր(ի)տին եւ պապին Բ(ա)րթօղոմին եւ ծն(ո)ղ(ա)ցս Ղ(ա)ր-ղ(ա)շ(պա)լուն եւ Չիչակ(ին)... եղբօրն Նազ(ա)րին եւ որդոց սոցին: Տիրունին, Յարութ(իւ)նին, Աճարոնին, Սամուէլին, Եղիային, Խ(ա)չ(ա)տուրին, Եղիազարին եւ միւս Նազարին եւ քվեր(ն) Եղիսաբէթին թվ(ին) ՌՃԻԹ (1680)»: **Լ. Մինասյան,** Իրանի հայկական վանքերը: Թեհրան, 1971, էջ 33:



Ս. Էջմիածնի Մայր տաճարի դուռը։ 1889 թ.

թյունները, որ Կ. Պոլսի հայ վարպետների աշխատանքները տարվում էին այլ քաղաքներ։ Օրինակ, Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Պողոս և Պետրոս առաքյալների խորանի ցածի մասում եղած դռան մասին պահպանվել է հետաքրքիր հիշատակություն, թե այնտեղ «կայ սուրբ Էջմիածնոյ դուռն, որ մեք Ստամպոլու հետ տարաք, մահտեսի Ղանտիլին շինածն է, սիրուն գեղեցիկ տօղրամայ. հին դուռն հանեցին և այս դուռն նորա տեղն դրին ըռահտով»— գրում է Զիար Ծիերճի օղլու քահանան, 1711—1712 թթ. Կ. Պոլսից Երուսաղեմ կատարած իր ճանապարհորդական օրագրում[35]։

[35] «Բազմավեպ», Վենետիկ, 1867, № 5, էջ 207։ Երենոսի և նոճե փայտից էին նաև Երզնկայի Տիրաշեն կամ ս. Ներսես Հայրապետի վանքի դռները՝ քանդակազարդ ու արձանագրություններով։ **Արտավազդ արքեպս. Սուրմեյան**, Երզնկա։ Գահիրե, 1947, էջ 92։

Փայտի գեղարվեստական փորագրությանը փոխարինելու եկավ ինկրուստացիան՝ դրվագազարդումը: Ինկրուստացիայի արվեստը հայաբնակ տարբեր վայրերում զարգացման տարբեր աստիճաններ է ունեցել: Փղոսկրի կամ կրիայի զրահի, ինչպես նաև գաղտիկուռի փոքրիկ հղկված կտորներով ծածկված դռները, զարդատուփերը, ժողովրդական երաժշտության գործիքները, զենքերը կրել են արևելյան կիրառական արվեստի ուժեղ ազդեցությունը: Հայ վարպետներն այդ գործով զբաղվել են Իրանում, Հնդկաստանում, Թուրքիայում և արաբական երկրներում:

Ինկրուստացիայի տեխնիկայով արված հետաքրքիր գործեր են Էջմիածնի տաճարի ավանդատան դռները, կատարված 1721 թ. (Հայաստանի պատմության պետական թանգարան): Ինչպես վկայում է դռան արձանագրությունը, դրանք Էջմիածնին է նվիրաբերել Ապուչեղցի Ազատենց սառաֆ Հակոբը[36], որը կարող էր դռները պատվիրած լինել և՛ Հնդկաստանում, և՛ Իրանում գործող հայ վարպետներին, քանի որ հայ սաղափագործները հիմնականում այդ երկրներում էին կենտրոնացած: Դռների զարդանախշի կառուցվածքը հիշեցնում է գորգերի դասական կոմպոզիցիա: Կենտրոնական մասը երիզված է մի քանի շարք տարբեր զարդանկարներով: Ներսի մասում հարթությունը լցված է ոլորապտույտ բուսական նախշերով, որոնք վերջանում են զանազան տեսակի ծաղիկների ոճավորված հատվածներով: Զարդերի դասավորությունը սիմետրիկ է, հնդկա-պարսկական ոճի: Կարևորը գաղտիկուռի դեղնա-կարմրագույնի և փայտի մուգ-շագանակագույնի համադրություններն են, որտեղ խորությունների (փորվածքների) ստվերներն ընդգծում են գաղտիկուռ մասերի գեղանկարչական շքեղությունը[37]: Այս դռները եզակի չեն եղել հայ արվեստում: Ագուլիսի ս. Հովհաննես եկեղեցին[38], Կեսարիայի ս. Կարապետ վանքի սրբի գերեզմանի խորան-մատուռը[39] նույնպես ունեցել են սադափե ինկրուստացիայով ձևավորված դռներ:

Գարեգին արքեպս. Հովսեփյանը Երուսաղեմի ս. Հակոբյանց տաճարի գաղտիկուռ զարդարուն դռների (1731) հրապարակման կապակցությամբ այն միտքն է հայտնում, որ այս արվեստը ծագումով պարսկական է, սակայն հայ վարպետները նրանցից վերցրել են միայն տեխնիկական կողմը: Հայ վարպետները հորինում են հայկական զարդանախշեր և դրսևորում տեխնիկական ինքնուրույն հնարներ[40]: Հիրավի: Երուսաղեմի դռների շրջանակների, ինչպես նաև դռների երկու կողմերի տարածքի բուսական զարդանախշերը ոչ միայն թելադրված են հայկական մանրանկարչության ավանդներից, այլև զգալի առնչություններ ունեն ժամանակի որմնանկարչական արվեստի հետ: «Հակոբ ծառան», ինչպես իրեն արձանագրության մեջ անվանում է դռները պատրաստող վարպետը[41], ժամանակի խոշոր արհեստավորներից է, որի աշխատանքը դուրս է գալիս այդ սահման-

---

[36] Արձանագրություններն են. «Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր սրբազանի զիշատակ է ապուչեղցի Ազատենց սառաֆ Յակորին և հոգաբարձութեամբ Աստապատցի Պետրոս վարդապետի: ՌՃՀ (1721) թվին»: «Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր սրբազանի յիշատակ է Ապուչեղցի Ազատենց սառաֆ Յակորին և հոգաբարձութեամբ բաղիշեցի Յովհաննէս վարդապետին ՌՃՀ (1721) թվին»: **Հ. եպիսկ. Շահխաթունեանց,** Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ: Հ. Ա, Էջմիածին, 1842, էջ 44—45:

[37] 1889 թ. Էջմիածնի տաճարի համար պատրաստվելիս փայտե երեք նոր դռներ, որոնք գոյություն ունեն նաև այժմ: Դրանք պատրաստվել են Թիֆլիսում, փայտի փորագրիչներ Ֆրանկե և Զետցեր եղբայրների կողմից: Դռները համեստ գեղարվեստական փորագրություններ ունեն: Սուղ զարդերը կտրտված ու փակցված են փայտե հենքին: **Ն. Գրիգորյանց,** Մի քանի խոսք Ս. Էջմիածնի դրռների առթիվ: «Նոր-Դար», Թիֆլիս, 1890, 17 օգոստոսի, № 121:

[38] Արձանագրություններն են. «Ցիշատակ է դուռս հախումին եւ կողակցին եւ որդուցն նոցին. Ած ոդորմի աշխատաւորացն թվին ՌՃԼԱ (1682)»: **Ե. Լալայան,** Գողթն: Թիֆլիս, էջ 65:

[39] Արձանագրությունն է. «Ցիշատակ է այս գեղեցկաշէն դուռն սբ. Կարապետի տաճարին Պասմաճի Պետրոսի որդի Մանտեսի Աստուածատուրին եւ հանգուցեալ եղբօրն Եսայեայ, եւ մօրն Եսայի, ի թուին ՌՄԺ (1761): Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին դուռը թուրքերը տեղափոխել են Ստամբուլ: **Ալպոյաճյան Ա.,** Պատմութիւն հայ Կեսարիոյ: Հ. Ա, Գահիրե, 1937, էջ 977, 988:

[40] **Գ. Հովսեփյան,** Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից: «Պայքար», Բեյրութ, 1950:

[41] Արձանագրություններն են. «Գեղեցիկ դուռն շինեցաւ ի պատրգութեն Տն Գրիգորի եւ Տն Յովանու վարդպտեցն»: «Վասն գլխադրի սրբոյն ՅԿԲՑ եւ է յիշատակ Կամրկապցի Նազարի որդուցն օրհնել» «Մինասեց Մակարին, Առաքելին, Մարտիրոսին եւ Յրութիւն, եւ ծնողն եւ ամ զրմիցս»: «Ընթերցողքդ յիշեցէք եւ ած ողորմի ասացէք: Ի ՌՃՁ (1731) թվին շինեցաւ ի ՅԿԲ ծոյէ»: Նույն տեղում;

ներից ու դառնում իսկական արվեստի ստեղծագործություն:

Գեղարվեստական փորագրություն կամ ձևավորում ունեցող փայտյա դռները ճարտարապետական կառույցների անհրաժեշտ մասն են եղել: Նրանց շնորհիվ մեղմացել են եկեղեցիների պատերի խստությունները կամ առավել շքեղ արտահայտություն են ստացել նրանց քարե դեկորատիվ հարթությունները: Հայ վարպետները հիմնականում դռները ձևավորել են խաչքարերի սկզբունքով, սակայն նրանց խորթ չեն եղել ինչպես ազգային զարդանախշերի տարբերակները, նույնպես և հարևան ժողովուրդների դեկորատիվ արվեստներից ընկալածը: Միաժամանակ, նրանք դրսևորել են փայտի նյութի և ֆակտուրայի բարձր զգացողություն, նրա գեղարվեստական կերպարավորման վարպետություն:

Արվեստի յուրաքանչյուր ստեղծագործություն հարստացնում է ազգային մշակույթը: Փայտի գեղարվեստական փորագրությամբ կատարված դռները նույնպես դրա վկայություններն են:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ